

4743



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«25» 04 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 052 - 24

Նախաձեռնողը՝

«ԷՐԻԿ 1» ՍՊԸ
ք. Երևան, Լենինգրայան 31

Գործունեությունը՝

Արժվանիստի անդեզիտաբազալիների արտահաշվեկշռային պաշարներով հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության (պաշարների վերազնահարում) աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Հերիքնազ Մկրտչյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 052 - 24

« 25 » ապրիլի 2024թ.

**Արձվանիստի անդեզիտաբազալտների արտահաշվեկշռային պաշարներով
հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության (պաշարների
վերագնահատում) աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝ «ԷՐԻԿ 1» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ, Ծրագիր,
Թափոնների կառավարման պլան և այլն
Տեղադրման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք,
Արձվանիստ բնակավայր

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ Հայտ)՝ «ԷՐԻԿ 1» ՍՊԸ-ն նախատեսում է Արձվանիստի անդեզիտաբազալտների հանքերակման վերագնահատվող 5.2 հա տարածքում իրականացնել երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է պարզել տեղամասի թարմ բազալտների պիտանելիությունը՝ բլոկների, շինարարական խճի ու ավազի արտադրության 9479-2014 ԳՈՍՍ-ի, 8267-95 ՀՍՍ ԳՈՍՍ-ի և 8736-2014 ՀՍՍ ԳՈՍՍ-ի տեխնիկական պահանջներին համապատասխան:

Նկարագրական մաս. Արձվանիստի անդեզիտաբազալտների երևակման տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արձվանիստ բնակավայրի վարչական սահմաններում և հաշվառված է որպես համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողեր:

Հայցվող տարածքը Մարտունի քաղաքից գտնվում է 18 կմ, Արձվանիստ բնակավայրից 1.8 կմ (հարավ-արևելք), Մ-11 միջպետական նշանակության ավտոճանապարհից մոտ 2.9 կմ հեռավորության վրա: 705 մ արևմուտք անցնում է S-4-75 տեղական նշանակության ավտոճանապարհը: Սևանա լճի ափը գտնվում է հայցվող տարածքից 3.4 կմ, Կոթիկ (Արձվանիստ) և Ծարիրագետ գետակները՝ համապատասխանաբար 290 մ և 920 մ հեռավորությունների վրա: Երևակման տարածքը, ըստ Սևանա լճի գոտիավորման հատակագծի, ներառված է անմիջական ազդեցության գոտու սահմաններում, որն ընդգրկում է կենտրոնական գոտու սահմաններից դուրս գտնվող ջրհավաք ավազանը՝ մինչև ջրբաժան:

Տարածքում առկա են ձևավորված ենթակառուցվածքներ, ճանապարհներ:



Հետախուզվող տեղամասը տեղակայված է 2000 մ և ավել բացարձակ բարձրությունների վրա: Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են էոցենի, պլիոցենի, պլեյստոցենի և հոլոցենի հրաբխածին, հրաբխածին-նստվածքային և նստվածքային առաջացումները: Չարգացած են հիմնականում գետահովտադարավանդային հողերը և սևահողերը: Բուն ուսումնասիրվող տարածքի մակերեսը քարքարոտ է: Հողային ծածկույթը բնութագրվում է ցածր որակական հատկություններով: Սողանքային մարմիններ, սելավային երևույթներ երևակման կամ հարակից տարածքում չեն արձանագրվել:

Շրջանի կլիման խիստ մայրցամաքային է, ցածրադիր մասերում՝ չափավոր մայրցամաքային: Տեղումների տարեկան միջին քանակը տատանվում է 300-500 մմ սահմաններում: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը տատանվում է +5-10°C սահմաններում, ամենատաք ամիսների միջին ջերմաստիճանը՝ +10-15°C:

Տեղամասի տարածքում չեն դիտարկվել խոշոր կաթնասունների բներ, որջեր: Չեն արձանագրվել նաև պահպանվող, էնդեմիկ, ՀՀ բույսերի կամ կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ:

Հայցվող տարածքի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40°8'1.57"- հյուսիսային լայնության, 45°31'38.16" - արևելյան երկայնության:

Բուն անդեզիտաբազալտների հանքավայրի տարածքում 1971 թվականին իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում գնահատվել է Մարտունի շրջանի Արծվանիստի անդեզիտաբազալտների հանքավայրի պաշարները (A -174958 մ³, B -943957 մ³, C,-958612 մ³) և հաստատվել է ՊՏՀ-ի 1972թ. հունիսի 20-ի թիվ 210 արձանագրությամբ՝ որպես երեսպատման, շինաքարի և ավազի ու խճի հումք: Սակայն ՀՀ ԵՊԲՆ աշխատակազմի ՕՀՊԳ-ի 2012թ. մայիսի 18-ի որոշմամբ վերոհիշյալ հանքավայրի հաշվեկշռային պաշարները դուրս են գրվել և հաշվառման են վերցվել արտահաշվեկշռային պաշարների հաշվեկշռում:

Տեղամասում նախկինում կատարվել են շահագործողական աշխատանքներ, տարածքը մասամբ խախտված է:

Հայցվող տարածքը սահմանափակվում է հետևյալ եզրային կոորդինատներով (ըստ ArmWGS-84 համակարգի).

- | | |
|------------------|----------------|
| • X1 - 4444679.5 | Y1 - 8544735.0 |
| • X2 - 4444748.0 | Y2 - 8544900.0 |
| • X3 - 4444403.0 | Y3 - 8545011.5 |
| • X4 - 4444426.0 | Y4 - 8545846.0 |
| • X1 - 4444679.5 | Y1 - 8544735.0 |

Վերագնահատումը կատարվելու է նախկին համանուն հանքավայրի կենտրոնական մասի մոտ 5.2 հա մակերեսով տարածքի վրա:

Անդեզիտաբազալտային կազմի ապարների հզորությունը տատանվում է 2.0-ից մինչև 50-60 մ: Առավելագույն հզորությունը դիտարկվում է հայցվող տարածքից մոտ 1.5 կմ հեռավորության վրա, ձորակում, որտեղ հոսքի հատակը գտնվում է 2030 մ բացարձակ բարձրություն ունեցող նիշում:

Երկրաբանահետախուզական աշխատանքներն իրականացվելու են հորատանցքերի և բացահանքի անցմամբ՝ հաշվի առնելով բնական մերկացումները, կատարելով համապատասխան փաստագրման և նմուշարկման աշխատանքներ:

Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով կատարվելու է երկրաբանահանույթային աշխատանքներ և տոպոգրաֆիական հանույթ 5.2 հա տարածքի վրա: Երկրաբանական փաստագրման աշխատանքները /որոնց ծավալները կկազմեն՝ 157 գծ.մ հորատահանուկի փաստագրում, 20 գծ.մ փորձնական բացահանք/ նախատեսվում են կատարել 1:100 մասշտաբով: Տոպոգրաֆիական հանույթը նախատեսված



է իրականացնել բոլոր հետախուզական փորվացքների գործիքային տեղադրմամբ տոպոհիմքի վրա:

Հորատման աշխատանքները նախատեսված է իրականացնել մեխանիկական սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով 132-112 մմ տրամագծով: Նախատեսված է հորատել 5-53 մ խորության 6 հորատանցքեր 157.0 մ ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80-85%: Նախատեսվում է հորատող հաստոցի 6 տեղակայում և տեղահանում՝ ՌԻԳԲ-1ՎԱ տիպի ինքնագնաց հաստոցով:

Պիտանի բլոկների ելքը լեռնազանգվածից որոշելու նպատակով փորձնական բացահանքից նախատեսված է կատարել 150.0 մ³ ընդհանուր ծավալով փորձնական հանույթ թարմ, 120.0 մ³ խիստ ճեղքավորված (փուշտա) անդեզիտաբազալտներից: 30 մ³ կազմելու է լանջային փուխր նստվածքներով՝ հողաբուսական նյութի խառնուրդով: Լեռնազանգվածից մենաքարերի պոկումը կատարվելու է մեխանիկական, հորատասեպային եղանակով, օգտագործելով բնական ճեղքերը:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրման նպատակով հորատանցքերի հանուկից կնմուշարկվի 28 հանուկային և 2 մենաքարեր (բացահանքից): Լաբորատոր ուսումնասիրությունները նախատեսված են կատարել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիայում:

Հողաշերտի հզորությունը հորատահարթակների տարածքում կազմում է միջինը 0.6 մ, փորձնական բացահանքի համար ընտրված լանջային տարածքում՝ 0.3 մ:

Երկրաբանական ուսումնասիրությունների դաշտային աշխատանքները լինելու են կարճատև:

Խմելու և կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը գնվելու է Արծվանիստ բնակավայրի առևտրի կետերից շալցված տարբերակով: Տեխնիկական ջուրը (օրեկան մոտ 250 լ) նախատեսվում է վերցնել երևակման մոտակայքում անցնող Կոթիկ (Արծվանիստ) գետից:

Հորատման ժամանակ նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվել, մեքենաների տեղաշարժը կատարվելու է գոյություն ունեցող բնահողային ճանապարհով:

Նախատեսվում է 6 հորատման հարթակների հարթեցում, միաժամանակ աղտոտումից պաշտպանելու նպատակով հողաբուսական շերտի /մոտ 0.6 մ հզորությամբ/ հանում մեխանիկական եղանակով:

Այս աշխատանքների ծավալները ստորաբաժանվում են՝ 6 հորատման հարթակ, մեկ հորատման հարթակի մակերեսը կազմելու է 24 մ², իսկ ընդհանուր մակերեսը՝ 144 մ²: Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի խախտումը կատարվելու է հորատման հարթակների (144 մ², 86.4 մ³) և փորձնական բացահանքի սահմաններում (100 մ², 30 մ³) տարածքում:

Շտախուզական աշխատանքների ավարտից հետո նախատեսված է կատարել հորատման հարթակների և փորձնական բացահանքի տարածքի ռեկուլտիվացիա: Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հորատահարթակների և փորձնական բացահանքի կառուցման ժամանակ հանել հողաբուսական շերտը (համապատասխանաբար 0.6 մ և 0.3 մ հզորությամբ) պահպանել այն մինչև ռեկուլտիվացիոն աշխատանքները: Այդ ծավալները կարճատև կարճատև առանձին-առանձին և աշխատանքների անմիջապես ավարտից հետո ամբողջությամբ նախատեսված է կուտակել խախտված տարածքների անմիջական հարևանությամբ օգտագործել խախտված հողատարածքների վերականգնման համար: Վերկանգնման աշխատանքները նախատեսված է իրականացնել լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով:



Ռեկուլտիվացման աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկում իրականացվել է ՀՀ կառավարության 10.10.2021թ.-ի թիվ 1733 որոշմամբ սահմանված ընթացակարգերով:

Հայտում ներկայացվել է երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումներ՝ իրականացման ծախսերով: Մշտադիտարկումների իրականացման համար ծախսերը գնահատվել են 146.0 հազ ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Նախատեսվող գործունեության Հայտի փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, Գեղարքունիքի մարզպետարանը:

Գնահատման և փորձաքննության փուլերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրում իրականացվել է 2 (երկու) հանրային քննարկում:

Փորձաքննական գործընթացում Հայտը մի քանի ամգամ գրություններով ներկայացվել է «ԷՐԻԿ 1» ՍՊ ընկերությանը լրամշակման, որտեղ մի շարք դիտողությունների հետ մեկտեղ եղել են նաև ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները, որոնք Ընկերության կողմից հաշվի չեն առնվել լրամշակված Հայտերում, այդ թվում՝

- Հայտում չի ներառվել տարածքի հիդրոերկրաբանական ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն, համաձայն որի հնարավոր կլինեք բացահայտել ուսումնասիրության տարածքի մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների փոխկապակցվածությունը:
- Չեն ներկայացվել նախատեսվող գործունեության տարածքից 290 մ հեռավորության վրա գտնվող Արծվանիստ գետի վրա հնարավոր ազդեցությունները:
- Չի ներկայացվել նաև գործունեության տարածքում սելավատար վտակների առկայության և սելավային վտանգի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Երկրաբանական ուսումնասիրության համար նախատեսված տարածքի մակերևութային և ստորերկրյա ջրերի բնութագրմամբ (առկայությունը, խորությունը, դեբիտ, քիմիական կազմ) չի հստակեցվել հայցվող տարածքում առկա գրունտային ջրատար հորիզոնների և գործունեության ընթացքում հորատումների ազդեցությունը գրունտային ջրատար հորիզոնների բնական վիճակի վրա:

Հայտում բացակայել է նաև բավարար տեղեկատվություն և հիմնավորումներ Ընկերության կողմից հայցվող տարածքից 290 մ և 920 մ հեռավորությունների վրա գտնվող Կոթիկ (Արծվանիստ) և Ծարիրագետ գետերի վրա նախատեսվող գործունեության և հետագա հանքավայրի շահագործման աշխատանքների հնարավոր ազդեցությունների (աղտոտման ռիսկեր) և դրանց նվազեցմանն ու մեղմացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:



Հաշվի առնելով վերոնշյալ հիմնավորումները և այն հանգամանքը, որ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում՝ նախատեսվող գործունեությունը, ինչպես նաև հետագայում արդյունահանման աշխատանքները կարող են պարունակել ջրային ռեսուրսների աղտոտման, Սևանա լճի էկոհամակարգի, ջրհավաք ավազանի և լանդշաֆտի վրա էական բնապահպանական ռիսկեր:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներից ելնելով՝ Արժվանիստի անդեգիտաբազալտների արտահաշվեկշռային պաշարներով հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության (պաշարների վերագնահատում) աշխատանքները համարվում է ոչ նպատակահարմար:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԷՐԻԿ 1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Արժվանիստի անդեգիտաբազալտների արտահաշվեկշռային պաշարներով հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության (պաշարների վերագնահատում) աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Աստղիկ Վարդանյան

